ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՓԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 տոլար թղթադրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար արկն. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սակ յաւելման բաժնէգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 91

1886 ՅՈՒԼԻՍ 3
(ՅՈՒՆԻՍ 21 Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Կը հրատարակուի Շաբթ. և Երք. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Գանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50).

ԹՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ.—Մի շաբաթ ի Փարիզ. — Նամակ Աստրօ-Հունգարիահն (Սուչաւա).—Նամակ Թիւրքիահն (Վան).—Կրօնափոխութեան խնդիրը ի Վան.—Հայեր ի Թիւրքիա.—Մահագոյժ.—Ֆրանսական յուրեր.—Տեղական.-Արտասահմանի յուրեր.—«Արմենիա»ի պատասխանիներ.—Գանուցգումներ.—Բանասիրական (Պարսկաստանի հայերի ներկայ վիճակը)։

Ա Զ Գ

Կը խնդրենք մեր բաժնորդներէ որոնք դեռ չեն վճարած իրենց բաժնորդագին, փութալ իրենց հաշիւները մաքրել անմիջապէս ի մեր պայման ԿԱՆԽԻԿ վճարել է և մենք ստացած ենք ցարդ մինչդեռ մեր բոլոր ծախքերը կանխիկ վճարուելով պարտաւոր ենք անել այստեղ։ Կը յուսանք որ մեր Մեծ. բաժնորդներ կրկնել չեն տար մեզ այս ապրարտութիւն, և չստով կը ստանանք անվճար մնացած բաժնորդագիրներն։

Կը խնդրենք նոյնպէս մեր բաժնորդներէ որ չնորհ անեն չստով պատասխանել «Արմենիա»ի 85 թուով եղած հարցման, քանի որ իրենց դիւրութեան համար տպագրուած նամակներ ալ ղրկած ենք։ Այդ նամակները բաց և 5 սանթիմի արժէքով մեզ հասնելու համար, մէջը ձեռագիր երկար դրութիւններ պէտք չէ դնել, այլ դրել քաղաքի անունը, ղրկողի ստորագրութիւնը և նամակի վերջը քաշուած գծին վրայ «Ա», եթէ առաջին պայմանը կընդունի (այսինքն մի բաժնորդ դանել որի հատցէն պէտք է ֆրանսերէն դրել նամակին վրայ մասին մէջ բաց ձեացած տեղը)։ «Բ», եթէ երկրորդ պայմանը կընդունի, (այսինքն տարեկան 40 ֆրանգ բաժնորդագին վճարել) և կամ դրել հետեւեալ երկու խօսքերէն մին։ «Ոչ մեկը. արդի ընթացքով կը շարունակեմ» և կամ թէ «Ոչ մեկը. պիտի դադրեցնեմ»

Մեզ համար շատ ախտպղական է չուտով իմանալ «Արմենիա»ի ունեցողի վիճակը, որպէս զի եթէ պիտի կրնանք շարունակել այս ամիս վերջանալէ յետոյ, քան այնմ մեր կարգադրութիւնները ընենք։ Ուստի կը խնդրենք չուտով մեզ պատասխանելու չնորհն ընել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

(Շարունակութիւն 90դ. թիւէն)

Սակայն այդ վարժամութիւնը, ճոխութիւնը, բարեաւաճումը շատ երկար չը քաշեց։ Այսօր դուռ առերակները միայն կարելի է տեսնել։ Ոչ թէ միայն Պարսկաստանի, այլ և Հնդկաստանի նշանաւոր հայերը հետզհետէ փչացան, աղքատացան, անհետ եղան։ 12,000 ընտանիք ունեցող Նոր-Ջուղան իր 24 եկեղեցիներով այսօր ներկայացնում է մի խեղճ գիւղ 300 տնով և մի քանի եկեղեցիով։ Նախկին հարստութեան հետքն անգամ չէ մնացել։ Հնդկաստանի 25—30 հազար ժողովրդից այսօր հազիւ 130—150 տուն է մնում։ Այդ աւերման և կործանման պատճառները քննելը մեզ շատ հետաքրքրական է։ Այսքան միայն կասենք, որ թէև գլխաւոր պատճառն զանազան չարեաց, օրինակ Նադիր Շահի, Շահ-Ամիդի բռնութիւններն, աֆղաններուն արշաւանքներն են եղել, բայց չէ կարելի ուրանալ և այն հանգամանքը, որ Հնդկաստանի հայերի անհետացման պատճառն եղել է և այն, որ նոքա չեն կարողացել մրցել Անգլիացիների պէս քաղաքակրթ ազգի հետ։

Նոր-Ջուղան ոչ միայն նիւթապէս, այլ և մտաւորապէս խիստ բարձր զարգացման վրայ է եղել կանգնած։ Գրականութիւնը, արուեստները բաւական ծաղկած են եղել, ինչպէս և տպագրութիւնը։ Բայց այսօր միայն մի սխուր տեսարան է ներկայացնում։

Այժմ պատանք Ատրպատականի հայերին։ Պէտք է զանազանել Պարսկաստանի, կամ Իրանի հայերը Ատրպատականի հայերից։ Իրանի կամ Պարսկաստանի հայերը նոքա են, որոնք բնակվում են Ներքին Պարսկաստանում — Թէհրանի, Սպահանի, Համադանի, Շիրազի գաւառներում և քաղաքներում և որոնք բերուել են այդտեղ, ինչպէս ասացինք, Հայաստանից 17րդ. դարում Շահ-Աբասի ձեռքով։ Ատրպատականի կամ հին հայկական «Պարսկահայք» կոչուած նահանգի մէջ դանուած հայերը շատ հին ժամանակից ի վեր բնակուել են այդ երկրում և ամբողջ դարերի ընթացքում նեմատակ են եղել շատ ազգաքների և տառապանքի։ Ատրպատականը հայկական յիշատակներով լի է։ Հռչակաւոր Հեր և Ջարևանդ գաւառները, Աւարայրի դաշտը, ուր նահատակուեցան Վարդանեանք, Տզմուտ գեղը, հռչակաւոր Ս. Թադէոս Առաքելոյ Արտազու վանքը, որ առաջ արքեպիսկոպոսական նշանաւոր վիճակ էր և կաթուղիկոսական ընտրութիւնը կատարող չորս գլխաւոր վիճակներից մինը, Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը—տակաւ բոլորը կանգուն յիշատակներ են։ Այդ նահանգի մէջ եղած գլխաւոր քաղաքները—Դաւրէժ, Ուրմիա, Խոյ, Մարաղայ, Սալմաստ, Սուլտանիէ, Արդաբիլ, Դուխտրջան և Ղարատաղ գաւառը կամ հին Փայտակարանը, դեռ պատմական ամենահին ժամանակում յայտնի են եղել իրրև բազմամարդ հայ քաղաքներ և երկիրներ։ Ղարադաղում մինչև այսօր գոյութիւն ունեն անհամար եկեղեցիներ, վանքեր, աւտարակներ և բնակիչները բուն հայկական տիպարը չեն կորցրել։ Ատրպատականի մայրաքաղաքի Դաւրիժի մէջ 7000 տուն հայ կար։ Հայերը 12 եկեղեցի ունէին այդ քաղաքում և այսօրուայ հռչակաւոր «Հապտի Սհար» կոչուած մզկիթը Հայոց Մայր եկեղեցին էր։ Սուլտանիէ քաղաքում որ այսօր մի խեղճ պարսիկ գիւղ է, հայերի այնքան բազմութիւն կար, որ 25 եկեղեցի էր շինուած։ Սալմաստի եպիսկոպոսութիւնը կաթուղիկոսութեան համահաւասար դիրք ունէր։ Այդ էր պատճառը, որ երբ 14րդ. դարում 1333 թուին Խուդին Ցուվհան Քռնեցի կոչեցեալ վարդապետը հաստատեց Ունիթորաց կարգը, որ այնքան աղէտներ տեղծեց հայ ազգի համար, այդ կարգին պատկանող վարդապետները իրենց մեծ վարդապետութեան քաղաքութեան համար իրրև կենդրոն ընտրեցին Դաւրէժ, Մարաղայ, Սուլտանիէ քաղաքները Նախիջևանի հետ միասին։ Ունիթորները չստով կարողացան հայերից շատերին օտարացնել իրենց մայրենի եկեղեցու ծոցից։ այդ օտարացածները յայտնի էին «Ախտարմայ» անունով, որոնք ապագայում, երբ Ունիթորները անզօր եղան պաշտպանել մահմետականների դէմ, սաստիկ հալածանք կրեցին մահմետականների կրօնը ընդունել։ Այդպիսով հայերի մեծ բազմութիւն պատճառեցան չնորհիւ անհետացաւ, ձուլուեց մահմետականութեան հետ։ ամբողջ քաղաքներ, ինչպէս Սուլտանիէ, Մարաղայ, մահմետականութիւն ընդունեցին և հայութեան հետքը կորաւ։ Ատրպատականի հայերի մի մասը այդպէս փչացնալով, մի մասն էլ Պարսից և Օսմանցւոց մղած պատերազմների ժամանակ կոտորուեցան, մի մասն էլ Շահ-Աբաս պղծականութեան ժամանակ գլխից Սպահան։

(Շարունակելի)

Թաւրիզ Հ. ԱՒԱԳԵԼԵԱՆՑ

ՄԻ ՇԱԲԱԹ Ի ՓԱՐԻԶ

Մի քանի բարեկամներ փափաք կը յայտնեն մեզ հրատարակուած տեսնել այն տպաւորութիւնները զոր ունեցանք մի շաբաթ անցուցնելով ի Փարիզ, երկու շաբաթէ չատ յառաջ։ Մեր նպատակէ դուրս է նկարագրել այստեղ այդ հիանալի քաղաքի հրաշակերտներն զոր առաջնորդող դէրքերն (Guide—Itinéraire) կը նկարագրեն արդէն հետաքրքրութիւններու Արդէն այն մի շաբաթի զոր տուինք Փարիզ երթևեկի, այնչափ կարճ եղաւ, և նոյն միջոցին օդն այնչափ անձրեւոտ և մրրկալից որ չենք կրնար տեսարժան վայրերուն հետ տեսակցելու և ծանօթանալու մեր փափաքը ևս չկրցաւ լիովին գոհացում տանել։

Այլ սակայն տեսլարժ չինիր, կարծենք, դէթ մի քանի կարճ նկատողութիւններ նկարագրել այնտեղի Հայերի վիճակին վրայ։ Կըսուի թէ 300 Հայ կայ Փարիզի մէջ. բայց մարդ առաջին տեսութեամբ կը կարծէ թէ 30 Հայ եղած լինի այնտեղ։ Դժար է ունենալ Փարիզի Հայերի ճիշդ վիճակագիրը դի համախմբուելու մի կեդրոն կամ միութեան մի կապ չկայ իրենց մէջ, ո՛չ կրօնական և ո՛չ ալ ազգային տեսակէտով։ Փարիզ քաղաքը մի ընդարձակ ծով է որի մէջ ինկած մի քանի Հայերն իրենց հատնիլ կըցած ժայռերուն վրայ կը հանգչին այս կամ այնտեղ իրարմէ անջատ։ Փարիզաբնակ Հայերէ մին ինձ ըսաւ թէ երբ այցելութեան գնաց Զօրավար Լօրիս Մելիքովին նորա Փարիզէն անցած ժամանակ, տեսաւ նորա մօտ Փարիզաբնակ Թուրքահայ բազմաթիւ Հայեր օրով ոչ մի նուէրը խնայած էր և ո՛չ ալ գոյութիւնը դիտեր Փարիզի մէջ։ Փարիզի «Հայկազեան Ուսումնասիրաց ընկերութիւն»ը մինչև մի սահմանի մի կապ եղած է Հայերին մէջ։ Վերջին ժամանակներ ընկերութեան մէջ ծագած վէճերն արձակած են այդ կապէ Ուսմանց Հայ ուսանողներն ալ։ Ցաւալի մի առանձին խումբ կը կազմեն։ Այդ բաժանում հասած է այն սահմանի և հանգչած այնպիսի կէտերի վրայ որ այլևս վերադարձելի կը թուի մեզ։

Ջարևանդ գաւառները, Աւարայրի դաշտը, ուր նահատակուեցան Վարդանեանք, Տզմուտ գեղը, հռչակաւոր Ս. Թադէոս Առաքելոյ Արտազու վանքը, որ առաջ արքեպիսկոպոսական նշանաւոր վիճակ էր և կաթուղիկոսական ընտրութիւնը կատարող չորս գլխաւոր վիճակներից մինը, Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը—տակաւ բոլորը կանգուն յիշատակներ են։ Այդ նահանգի մէջ եղած գլխաւոր քաղաքները—Դաւրէժ, Ուրմիա, Խոյ, Մարաղայ, Սալմաստ, Սուլտանիէ, Արդաբիլ, Դուխտրջան և Ղարատաղ գաւառը կամ հին Փայտակարանը, դեռ պատմական ամենահին ժամանակում յայտնի են եղել իրրև բազմամարդ հայ քաղաքներ և երկիրներ։ Ղարադաղում մինչև այսօր գոյութիւն ունեն անհամար եկեղեցիներ, վանքեր, աւտարակներ և բնակիչները բուն հայկական տիպարը չեն կորցրել։ Ատրպատականի մայրաքաղաքի Դաւրիժի մէջ 7000 տուն հայ կար։ Հայերը 12 եկեղեցի ունէին այդ քաղաքում և այսօրուայ հռչակաւոր «Հապտի Սհար» կոչուած մզկիթը Հայոց Մայր եկեղեցին էր։ Սուլտանիէ քաղաքում որ այսօր մի խեղճ պարսիկ գիւղ է, հայերի այնքան բազմութիւն կար, որ 25 եկեղեցի էր շինուած։ Սալմաստի եպիսկոպոսութիւնը կաթուղիկոսութեան համահաւասար դիրք

Լինելով երբեմն ուսուցիչ և երկար կեանք վարած լինելով ուսանողների հետ, ինձ չատ կը հետաքրքրէ դոցա վիճակ։ Ուսանողները, իբր ապագայի ներկայացուցիչներ, կոչում ունին մեծ գործեր կատարելու, եւ թէ այժմէն պատրաստուին այդ ուղղութեամբ։ Մեր ազգի ներկայ վիճակը չատ ցաւալի է. եթէ մի մասի Թարական յոյս կայ, ապագային վերայ է այն։ Ապագայն ուսանողութեան ափին մէջ է։ Ա յս մտածումներով, ես ինձ պարտք համարեցի, Փարիզ գանուած կարճ միջոցիս մէջ որչափ որ իմ և ուսանողների ժամանակը կը ներէր, տեսնել անոնցմէ գէթ մի մասը։

Որչա՛փ ուրախութիւն ազդեց ինձ տեսնել հայ ուսանողների մի խումբ, հաւաքուած մի սենեակի մէջ, ուր եկած էին լսել իմ տեսութիւններս և մտածումներս Հայաստանի ազգի վիճակին վերայ։ Նոցա կազմուրէին հայ հայրենիքի յիշատակները և նոքա օգտակար միտքեր կարտայայտէին Արմենիան ազատութեան նկատմամբ։ Աւելի ուրախութիւն այն էր որ այդ ազնուութեան և մտածումների կը մասնակցէր և մի հայ ուսանողուհի։ Ես ուրախութեամբ տեղեկացայ որ Փարիզի մէջ 3 հայ ուսանող օրիորդներ կան Ռուսիայէն եկած։ Որչափ մեզ յայտնի է, պէտք է ըսել որ Թիւրքիոյ հայ օրիորդները իրենց բացակայութեամբ միայն կը փայլին Փարիզի հայ ուսանողութեան մէջ։ Թիւրքիոյ Հայերը, ինչպէս մի քանի կէտերի, նոյնպէս և սորա մէջ յետ ձնացած են իրենց Ռուսիոյի ազգակիցներէն։

(Շարունակելի)

Մ. Փ.

ՆԱՄԱԿ ԱԻՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԷՆ

Սուչաւա, 24 Յունիս 1886

«Արմենիա» լրագրի 85 թուին մէջ կարդացի որ մինակ 348 բաժանորդներ ունիք և քիչ ըլլալուն համար գոհ չէք։ Արդարև չատ քիչ բաժանորդներ են. բայց մեր հոյ ազգի մէջ դեռ ասոնք ալ չատ են որովհետև մեր մէջ չկայ իրարու օգնել։ Շատ կը ցաւիմ մեր ազգի վիճակին վրայ, մանաւանդ մեր երիտասարդոց վրայ որոնք այս նոր ժամանակիս մէջ ուսում առած են, բայց իրենց ուսումէն Ազգիս համար օգուտ ցոյց չեն տար։ Ո՛վ յետին ժամանակ. եթէ մէկ փոքրիկ «Արմենիա» լրագիր մը չէ կարող հրատարակուիլ հազիւ թէ ոչինչ արժէքով, որովհետև իւրաքանչիւր 20 ֆրանգը, այդ նշան է մինակ թէ սէրը ազգութեան վրայ պակաս է մեր մէջ։ Շատ անգամ լսեցինք սա խօսքը մեր հոյ ազգին մէջ թէ՝ Օ՛ն, Հայեր, միաբան ձեռք ձեռքի տանք և ազգային յաջողութիւններ ձեռք բերենք։ Կերևայ թէ մինակ խօսիլ պիտենք, բայց գործով զկատարելութիւնը չենք ուզեր տեսնել։ Ոչինչ են հաւատք առանց գործոյ։ Ի՛նչ չահ, եթէ ունինք ազնուականութիւն, հարստութիւն և ամենայն ինչ, բայց զմիաբանութիւն և սէր չունինք։

Մի քանի տարով ալ մեր ազգի հին և նոր վիճակի նկարագրութիւնն ըլնեմ։

Ա յստեղ մեր հոյ ազգը մի քանի հարիւր տարի առաջ չատ բարելի վիճակ ունէր։ Մարզկային վիճակն այսպես է. բարի բախտաւոր կըլլայ այն մարդը որ իրեն վիճակին վրայ գոհ է և չի բաղձար կամ չի նեղանար ուրիշի ունեցածին վրայ։ Ա յսպէս էին և մեր պապերը, բարի ծերունիներն, ամէնքը միաբան սիրով կապրէին և չէին բաղձար ուրիշներու ունեցածները վրայ և անով ունէին բարի վիճակ և բաղդաւոր մարդիկ կը սեպուէին։ Յայտնի է, թէ՛ պատմութենէ և թէ՛ լսածնէս կամ տեսածնէս, թէ ինչքան հայ կար այստեղ. հազիւ թէ մէկ քաղաքին մէջ 6 կամ 7 հարիւր տուն որոց մէջ թէ՛ չատ հարուստներ կային և թէ՛ հասարակութիւնն ալ չէր այնպէս անբաւական և ողորմելի վիճակի մէջ, ինչպէս այս նոր ժամանակիս մէջ։ Մեր բարի ծերունի պապերը կաչխատէին որ ապագայ սերունդը իրենց բարի գործերը տեսնայ. ասով մեզի յիշատակներ թողել են. վանքեր եկեղեցիներ թողել են, մեզի համար վարժարաններ շինել են, թէև իրենք չատ խնայող են ուտելէ չէին։ Ա յս նոր ժամանակիս մէջ չատ ուսեալներ կան. բայց որ իրենց ուսումովը և խնայողութիւնովը մէկ աչխատանք չեն թողնում, ի՛նչ օգուտ ունին։ Մեր բարի ծերունի պապերը իրենց աչխատանքով, իրենց միաբանութեամբ և ազգասիրութեամբ գանձեր դիզել թողել են մեզ ու մենք այսօր կը ցրուենք։

Ահա ուրեմն եկանք այս նոր ժամանակուս մէջ որ մի քանի բան հաւաքականութեամբ պիտի խօսիմ։ Կըսենք որ մենք անբախտ ենք և բարի վիճակ չունինք որովհետև Հրեայները բոլոր գործերը ձեռք առած են և բոլոր Քրիստոնէից ճամբաները կտրած են. ոչինչ գործի չենք կրնար ձեռք ձգել։ Բայց մի՞թէ մեր պապերի ժամանակ Հրեայ չկար։ Պատճառն չէ՛ այն որ Քրիստոնեայք կըսեն թէ Հրեաները գրոլոր Քրիստոնեայք անբախտութեան մէջ բերին և մանաւանդ մեր Հայոց ազգը այս կը պօռայ թէ ի Հրեից ազգէն անանբախտութեան մէջ ինկած ենք։ Բայց ուրիշն մոռցած ենք թէ Հայ ազգի մէջ ցեցն ու անբախտութիւնը ժռած են մեր անմիաբանութեամբ, ծուլութեամբ, երբար չսիրելով և երբար չօգնելով։

Արդարև այս նոր ժամանակիս մէջ չատ բարձր ուսմանց դպրոցներ բացուեցան, ինչպէս Ռուսմանիայի մէջ Ֆօքչան, Ռաման և ն. և. բայց ի՛նչ չահ։ Հազիւ տարիի չափ տևեց և ահա տեսանք որ գարձեալ դպրոցները փակուեցան. ինչպէս որ Ռոման քաղաքի բոլոր հայ ուսուցիչները տուին իրենց հրաժարականները որ ի մէկէն տեղատմբերի դաս չտան որովհետև թոշակները կարող չեն վճարել իրենց։ Ահա ուրեմն այսոր ժամանակիս մէջ մեր բարի գործերն որ մեր անմիաբանութեամբ յիշատակ պիտի թողունք մեր ազգի տզատոյ սերունդին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Վաճ, 1/13 Յունիս 1886

Ամառը մօտեցած է. իւր անբաժան ընկերները — հիւանդութիւնները ալ իրարու ետևէ կը հասնին իրենց պարբերական գոհերը տանելու համար։ Շատեր կը վախնան թէ այս գոհերու թիւը, բազդատմամբ ուրիշ տարիներու, աւելի սաստիկ պիտի լինի յառաջիկային մէջ։ Մանաւանդ բուն քաղաքին մէջ աղտոտութիւն, փտութիւն խիստ չատ են և օդը սարսափելի կերպով գարչահոտ։ Կառավարութեան պաշտօնատանց, չուկայի չրջակայքն և փողոցները իրարու հետ կը մրցին ազտի դէղերով։ Առողջապահական օրէնքներու բնաւ ուշադրութիւն չտրուիր։ Քաղաքապետութեան պաշտօնեայք բնաւ հոգ չեն տանիր մարդութեան, որովհետև ոչ իրենք կը հասկնան այնոր օգուտները և ոչ իրենց գլխաւորները։ Անցեալ տարի ժողովրդեան արգիլուեցաւ փողոցներու մէջ աղտոտութիւններ թափել։ Քանի մը չարաթ այս արգելքը խստիւ դործադրուեցաւ, բայց յետոյ, ինչպէս ամեն մարդկան որոշումները, ջրի տակ գնաց և բոլ աւաչնոյն ազտեղութիւնները դիպուեցան փողոցներու մէջ որպէսզի անցորդներ ոտիպուին առանց չնչելու քայլել։ Ինչո՞ւ համար չգործադրուեցաւ այսքան լաւ որոշում մը։—Որովհետև Քաղաքապետական ժողովը արգելքը դնելէ ղատուրիշ բանի վրայ մտածել չսիրեր. այսինքն, օրինակի համար, քանի մը հատ արատաքնոցներ չշինուեցան, ուր չուկայի բազմութիւն ժողովուրդը կարենար իր պիտոյքները հոգալ։ Կառավարութիւնն այնքան անտարբեր է այս կարգի գործոց որ նոյն իսկ ղօրաց համար այդ նպատակին ծառայող մէկ երկու ջրկ չէ շինած։ Քաղաքի երիեւելիները միշտ պատիւ ունին իրենց կուչտ խրամին մէջ տեսնել կարկ հոգացող ղօրքերը որոց ապրելութեամբ խրամի յատակը ծածկատած է և օդը գարշահոտած։ Միայն հասարակաց տեղերը չեն որ գէշ կը խնամուին։ Մանաւանդ մարդաց աներու մէջ մաքրութեան յարգ չընծայուիր ճամբորդ մը հայերէ և թիւրքերէ միանգամայն բնակուած դիւղ մը եթէ երթայ, դիւրաւ կրնայ առաջնոց և վերջնոց բնակարանները իրարմէ զանազանել. թիւրքի տունը աւելի գարշահոտ և անմաքուր է. անոր դռնէն դուրս ելլող երախայի հագուստները էգզամի մէջ փտած կը լինեին, երեսները այնքան անմաքուր կ'երեւին որ կարծես թէ ամիսներով ջուր չէ դպած անոնց։ Զարմանք է երևոյթը թէ հայերը մաքրութեան համար պէտք եղած խնամ կը տանին. ա՛յ. բազդատմամբ դրացի թրքաց միայն լաւ են։ Տակաւին չատ չատ բաներ ունին անելիք, առողջապահական պայմանները ըստ բաւականին գործադրեալ տեսնելու։ Դիւղացիներու տները մանաւանդ սարսափելս խիստ հետի են առողջապարհական դրութեամբ կը շինուին, գրեթէ ստորերկրեայ։ Ա յս ձեւով շինուած տուն մը թէև ամբան աւելի զով և ձմրան աւելի տաք կը լինի, բայց կարելի է երևակայել թէ անդ սիրոյ սաստիկ խանգութեան, մժութեան և օդի չնորհգուելուն համար բնակիչները որքան վնասներ կը կրեն։ Օրինակ և խրատ կրնան ժողովրդեան ճանչցունել առողջապահութեան օգուտները. սակայն օրինակելի մարգեր մեր երկրին մէջ հազուագիւտ դարձած են, իսկ խրատ տուող բնաւ չկայ։ Մեր կղերները գժուելի երևակայական տանջանաց վրայ խօսելէ զատ, ուրիշ բանի վրայ չեն մտածեր։ Մեր երկրի բժիշկները ղօրաց ծառայող յոյներ են որ չարունակ կը տեղափոխուին և մեզ օգտակար լինելու ոչ կամք և ոչ դիւրութիւն ունին։ Քաղաքային բժիշկ մ'ունինք որ անցեալ տարի կարծեցուց ճգրտագործութիւն մը երեւան հանել, գիւղի մը մէջէ քանի մը գամէչի գանկտակներ բերաւ ի քաղաք, և պիտի հաստատեր թէ անոնք մարդու ոսկորներ են, եթէ ուրիշ բժիշկներ չգտնուէին ի վնաս։

Ազգ. կեդրոնին վարչութեան մի տարօրինակ որոշում մեծ յուզում պատճառած է ատոր Յայտնի է թէ վերջին ամիսներու մէջ Վանայ ժողովուրդը որքան զրգռուած է Պօղոս եպիսկոպոսի դէմ, փորձահայ կերպնեցուցած կախարդական գործին առթիւ, և քանի քանի անգամ բողոքեց ի Պոլիս, բայց միշտ անլսելի մնաց իւր ձայնը։ Արդ ամեն մարդ պարմանօք կիմանայ այժմ որ կեդրոնը ժողովրդի ձայնին կարեւորութիւն չտալով հանդերձ, որոշեր է Պօղոս եպիսկոպոսին լիազօր իշխանութիւն տալ որ եբեմփոխանական ժողովը, վարչական ժողովները լուծելով և առժամանակեայ վարչութիւն մը կազմելով, եբեմփոխանաց նորոգ ընտրութիւն մը կատարել տայ։

Անշուշտ լաւ դրութիւն մ'է ժողովրդի ձեռքին դնել այն պարագայի մէջ երբ ծանր անհամաձայնութիւններ կան ազգս երեսփոխանական ժողով կամ ներկայացուցիչ մարմինները չեն կարող լուծել, բայց չէ կարելի հասկնալ թէ ի՞նչ օրէնքի վրայ հիմնուելով կեդրոնական վարչութիւնը կ'որոշէ լուծել Վանայ երեսփոխանական և սորա ներկայացուցիչ ժողովները և նոր ընտրութիւն կատարել տալու համար, լիազօր իշխանութիւն կտայ ամբաստանեալ մարդու մը որ բնաւ ետ չգիտէ ինչ

ընտրութեանց վրայ ճնշում բանեցնելէ։ Այս մասին լոկ կասկածները չեն զոր կը յայտնեմ Արզէն ճնշմանց սկզբնաւորութեան հանդիսաւոր ենք։ Պօղոս եպիսկոպոս առժամանակեայ վարչութիւնը և թաղային ընտրութեանց յանձնախումբերը կազմակերպած է միայն իրեն խնկարկուներէն։ Կաւսակալը անցեալ օր կանչելով լուծեալ Գաղատքական ժողովոյ տասնապետ Գ. Մանուէլ Անանեան (Հակոբոսեան), զանազան հարցումներէ յետոյ կը յորդորէ զնա որ գործակալ երթայ ի Ռուսաստան և չմնայ ի վան. ո՛վ չգիտեր որ այս յորդորը վաղ կամ յայ հրամանի փոխարէն ատանց մեծ դժուարութեան։ Ետքէմ՝ առաջ Պօղոսի բարեկամներէն մին կասէր որ մտադրութիւն կայ աքսորել Կալոեան Գ. Քրիստոստուր, որովհետև ապօրէնութեանց մէջ ամենէն առելի եռանդուն կերպով աշխատողն է։ Արզէն Աբգարեան Դպիրդոր-Ծերունի փաստաբանը սոխալեցաւ բոլիսի հրամանատ մեկնիլ ատի, վասնզի յանդգնած էր «Մանդուէմ»ի մէջ Պօղոս եպիսկոպոսի դէմ քանի ատերպրութեամբ մի յօդուած հրատարակել։ Մինչև մէկ երկու չաբաթ, երբ ընտրութիւններն սկսան, բանտարկեալներու կամ աքսորեալներու ցուցակը բաւական պիտի լեցուի, մինչև այն ժամանակ Պօղոս եպիսկոպոս և իբրայինք բաւական միջոցներ պիտի գտնեն ժողովրդի ազատ ձայնը խղդելու։ մինչև այն ժամանակ կառավարութիւնն իր ջանքեր չպիտի խնայէ օժանդակելու եպիսկոպոսին, իսկ այնուհետև ծանրութիւն Սրբազան ուրախութեամբ պիտի հրճուի տեսնելով իր սիրեցեալը յաղթական, ոտքի տակ առած ճշմարտութիւն և արդարութիւն։

Աւանդ գիւղի մօտ տեղի ունեցած ոճրագործութեան առթիւ կառավարութիւնն կը չարունակէ նեղել նոյն գիւղի հայերը։ Վերջին չարթուն Աւանդի բանթալօն հազնողները մարթեալ քիւրտի մօտ ատրուեցան որ դուցին թէ անոնց մէջ չէ՛ն ոճրագործները։ Քիւրտը հատ մը միայն ընտրեց։

Նորանոր ճիրներ կը գործուին հետզհետէ։ Երէք չարաթի չափ առաջ քաղաքի վաղոյներուն մէջ գըտնուեցաւ մի հայ պատանի դաշոյնահար սպանուած։—Նոյն չարթուն մէջ քիւրտերը գիշերանոց մտնելով գիւղէն հեռի ջրաղաց մը կը վիրաւորեն ծանրապէս երկու հայեր և կողոպտելով կը հեռանան։—Վերջին օրերս Շատախի չգիտեմ որ գիւղի ոչխար կերթայ հրամանի փոխարէն սպառժելու համար։ Սպարկերտու մէջ քիւրտ մը հիւր կերթայ քահանայի մը տուն և ամէն մեծարանքները ընդունելէ յետոյ, բոլոր գիւղը կողոպտել և քահանայն ալ սաստիկ ծեծել տալով կը մեկնի։ Գիւղացիները իրենց տուն տեղը ձգած եկեր են տատ։ Որովհետև հարստահարիչները հայեր են, չպէտք է սպասել որ կառավարութիւնն աչխատի գտնալ ոճրագործները պատժելու համար և ես ալ կարենամ աւետել զայն «Արմէնիա»ի ընթերցողներուն։

ԿՈՐԻՒՆ

Ց. Գ. Շատախի մէջ սպանեալ ոչխարի մասին այժմ նոր կալի մանրամասնութիւններ կը ստանամ։ Սպանեալը Ծեծան գիւղի ուէն է եղեր։ Ոճրագործները զանիկայ բռնելէ յետոյ ...անդամը կարելով բերանը կը դնեն, լեզուն արբանին մէջ և ամբարիչները աւերուան մէջ. ապա որովայնը վառօդ լեցնելով կրակ կուտան որով կը փչէ եղկելին իր վերջին չունչը։

ՆՈՑՆ

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ Ի ՎԱՆ

Կը լսենք թէ երեկ Պօղոս եպիսկոպոսն հեռագիր մ՝ եկեր է ի Պատրիարքարան, հերքող կրօնափոխութեան լուրն, որոյ վրայ երէկ տեղեկութիւն խնդրած էր Ս. Պատրիարք Հայրը։

Կը լսենք նաև թէ երեկ վանէն մասնաւոր հեռագրեր եկեր են ի Պատրիարքարան, հաստատող կրօնափոխութեան լուրը։

Կը յիշուի թէ կրօնափոխութեան հանրապետին ստորագրող 80 վանեցիք իրենց կողմէ Պօլսեբնակ վանեցի մը գործակար կարդեր էին, Գեր. Աղաբեանին դիմելու և Առաջնորդ մը խնդրելու համար։

Մեզ իսայ կը տրուի թէ, մայրաքաղաքս գանուող գլխաւոր վանեցոց ազդու միջամտութեան և յորդորներուն վայ, այս գործակալն յետաձգեր է իր դիմումն առ Կաթողիկոս Հայոց Պատրիարքին։

(Արեւելք)

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

«Մշոյ Առաջնորդն ընդարձակ տեղեկագիր մը ղրկելով Ս. Պատրիարքէ Հօր, Ն. Ամենապատուութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ սա իրողութեան վրայ թէ, տեղային կառավարութիւնն ինք կը անօրինէ Հայոց մէջ ծագած ամուսնական դատերն, փոխանակ՝ ըստ գարտուղ աղգային առանձնաշնորհման՝ Հայոց Առաջնորդարանին յանձնելու զայնս։ Ո՛չ միայն «նամադայի» նկատական խնդիրք, այլ նաեւ այր և կին Թողուս եկեր թղթակցիլ անգամ ամուսնանալու խնդիրներ կ՝որոշուին եղեր Մշոյ կառավարական գատարանաց առջեւ, որոյ բազմաթիւ օրինակներ կը յիշէ Ն. Գերապատուութիւն։»

(Արեւելք)

Այս տողերը կը ներկայենք նոցա ուշադրութեան որք կը հրատարակեն թէ Թարութիւն պատրիարքի թղթակիրութեան շնորհով թիւրք կառավարութիւնը չդպչիր այժմ մեր ազգային առանձնաշնորհումներուն։

ՄԱՀԱԳՈՑԺ

Ծաւ ի սիրտ լսացանք թէ Վիէննայի Մխիթարեան միաբանութեան Աբբահայր Գեր. Վարդան եպիսկոպոս վախճաներ է։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հաւանական կը թուի թէ Թունեզի ֆրանսական ենայան պատուիրակ Պ. Քամպօն որ անհամաձայնութիւն ունեցած է տեղական իշխանութեան հետ, Կ. Պօլսի դեսպան անուանուի փոխանակ Պ. ոը Նոայլի։

—Փարիզի զինուորական հրամատար զօրավար Սօսիէ հրաժարական կուտայ իր պաշտօնէն։ Այս հրաժար գէշ տպաւորութիւն ըրած է և կը չանան յետ կեցուցնել զինք իր դատաւորութենէն։ Բարձրագոյն կարգի նկատումներ կը պահանջեն որ զօրավար Սօսիէ մնայ այդ պաշտօնի մէջ, գէթ մինչև Ալմանիայի Վիլհելմ Կայսրի մահը։—Այժմ կիմանանք թէ յետառած է հրաժարականը։

—Խորհուրդ կայ որ Էքսի իրատարանական և գրագիտական ֆաքիւլտէները վոխադրուին Մարսէյլ

ՏԵՂԱԿԱՆ

Երէկ Յիսուսի Սրտի տօնին առթիւ կաթոլիկ կղերականները իրենց սովորութեան համեմատ ցոյցեր տնել ուղեցին Հանրապետութեան դէմ։ Երեկոյին Սէն Մարթէնի եկեղեցին դուրս ելնելու ժամանակ, հանդիսականներէն մին պօռաց «կեցցէ՛ թագաւորը». իսկոյն ժողովուրդը սկսաւ բարձրագոչ պատասխանել «կեցցէ՛ Հանրապետութիւն» թագաւորականները մատնաւոր յարդանք ընծայելու համար Պ. Պ. Լը Մէ, կէ, Քօլօմպ և Պէնէ, Քաղաքապետական ժողովի պահպանողական 4 անդամներէն, նոցա եկեղեցիէն դուրս գալած ժամանակ կեցցէներով ողջունելին իրենց իսկոյն ժողովուրդը հակացոյցի համար սկսաւ պօռալ «կեցցէ՛ Հանրապետութիւն» և սուլելով ու հեգնական արտայայտներ հանելով ճանապարհ դրաւ զանոնք մինչև իրենց տունը։ Պ. Լը Մէկ դէմմանատաւոր հակակրութեան ցոյցեր կը լինէին և բաւական մեծ բազմութիւն հաւաքուած կը կենար նոցա դրան առջև. ոստիկանութիւնը որ ճանչան ժողովրդին հետ կը քալէր կռիւներն առջևն առնելու համար, սկսաւ ցրուել դրան առջև համախմբուած բազմութիւնը բռնի սովորական խօսքը կրկնելով. Allons! allons! circulez, s'il vous plait, Messieurs. Պրն. Պէնէ ոտիպուեցաւ ճանապարհին վրայ մի կառք մանելով սրընթաց հեռանալ ժողովուրդէն։ Հակացոյցի մասնակիցները մի քանի հազար հոգի էին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Վիէննայէն կը հեռագրեն թէ Բ. Դուռը մի խիստ ծանուցագիր է ղրկեր Պուլկարիայի իշխանին պահանջելով որ ճշդութեամբ գործադրէ դաշնադրութեան պայմանները և միանգամայն սպառնալով որ եթէ չգործադրուին, կրնան ծանր հետևանքներ յառաջ գալ։

—Դարձեալ Վիէննայէն ուրիշ աղբիւրէ եկած մի հեռագիր ալ կըսէ թէ հաւատալի չերևիր որ Բ. Դուռը մի սպառնական ծանուցագիր ղրկած լինի Սօֆիա։ Ընդհակառակ, կերևի որ Աւստրիական և Ալմանական կառավարութիւնները չատ օրինաւոր կը գտնեն Բ. Դրան և Ալեքսանդր իշխանի բռնած դիրքը Ռումելիոյ կատմամբ։

—Ամէնքն կը հեռագրեն յունիս 30ին թէ Պ. Թրիքուբիսի ձայն եղող լրագիրը նոր դէպքեր կրնդհմարէ Բումելիի մէջ և կը յայտարարէ թէ պէտք է որ Յունաստան պատրաստուի նորանոր զոհողութիւններու։ Այդ յօդուած մեծ տպաւորութիւն ըրած է։

—Յունիս 30ին սկսած են Անգլիոյ մէջ երեսփոխանական ընտրութեան գործողութիւնները։

—Կը հաւատան թէ ոստիկանութիւնը զգուշութիւններ ձեռք առեր է ապահովելու համար Պ. Չեմպերլէյնի և Լորտ Հարթինկթընի կեանքը որոնք ապտնելու դաւեր լրատած են իրլանտացիներուն։

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՊՈՒՐԼԷՇ.—Գ. Մ. Հ. Ստեփանը ձեր նամակ և ղրկեցինք 62ղ. թիւր։ Շնորհակալ ենք ձեր հաճախութենէն։ Առողջութիւն կը մաղթենք։

ՄԱՐՍԷՅԼ.—Մ. Հ. Մխիթ՛ձեր հայրենիքէ նոր բերած կարևոր լուրեր չունինք որ դուք ալ ոտանաւոր կը ղրկէք մեզ հրատարակութեան համար։

ՇՈՒՄԼԱ.—Թ. Մ. Հ. Ս. Ձեր ըլած տեղեկութիւնը կարդալով ուրախ եղանք. բայց չուզեցինք հրատարակել որ մի՛ դուցէ այդ ընկերութեան գործունէութեան վնասած լինինք։

ՌՈՒՄՃՈՒԳ.—Տ. Մ. Ս. Ձեր ուղղածները մէկ մասն այսօր, մէկ մասն ալ նախորդ փոստով ղրկած ենք։

Բ. ԱԲԱՍ.—Մ. Բ. Ս. յսօր սկսանք ղրկել թերթերն ձեր նշանակած երկու անձերին։

ՊՈՒՐԼԷՇ.—Ա. Կ. Մ. «Թատրական Թիթխալա»էն մի օրինակ ղրկեցինք ձեզ։ Ձեր ուղած ֆրանսերէն լրագիրներն հինցած և ճիշդ թիւն ալ մոռցած լինելով, գժար է գտնել այժմ այստեղ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ԲԱԹԻՊԱՑԻ

ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատրկր. քնկերքե.»

==

Մեծանուն բանաստեղծ Դամառ–Քամիթպաի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Դամառ–Քամիթպաի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, աւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքն ալ հանելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԴԻՒՂԱՅԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ » 40 »

Դիր ծախուին Պարսկ., «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Ծտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, երէ վերոյգրեալ գիներուն Ֆրանսական, բրբական կամ ռուսական փոստի բղպարոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

Ա Զ Գ

«Արմենիա»ի բաժնորդ եղեալ յանկայարկներին դիւրանալման համար, ուրախացնելք նոր բաժնորդագրութիւնները ընդունել իւրաքանչիւր ամսի ՀԿԷՆ սկսեալ։ Նախորդ թիւերն կը պրկուին անոնց միայն որք յատկապէս փափագ կը յայտնեն։

ՄԱՆՈՒԿ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՆԻՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԲԵՐԵՆԱԿ ԳԱԻԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ ԱՒԱՐԻՆ ԵՒ ՁՈՐԻՆ ՀՆԻՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԻՏԱՆԻ ԴԻՏՈՂՈՑ

==

Մասն Ա. Բ. Գ. (առաջ)

Հայաբնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չին և ամոյի վանօրէից նկարագիրն, ատենդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ազգ. գործ մի է, ամենակարեւոր և հետաքրքրական գրուած ՀԱՅԱՍՏԱՆԱՑ և շատ նուրբ տեսութեամբ պիտանի ամեն Հայու յամախակի վերծանութեան։

Կը պանուի բոլոր գրախաճառաց քով. կեդրոնատեղին է Գօլխ Պահճ–գախու հայագործի վաճառատունն, թիւ 11։

Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք հզիւս կը կատարուին։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ա.

Կեղրոնական հիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախոսութիւն ու բնախոսութիւն։

Աշխատասիրեաց Ն. Տաղաւարեան

Հայերէն բնական պատմութեան մը անհրաժեշտ պէտքն է վաղուց անոր կը զգայուէր։ գոհութեամբ կը տեսնեմք որ Պրն. Տաղաւարեան կաշխատասիրէ լրացնել այդ թերութիւնը, հրատարակելով այս կարեւոր գործը, որ կը բաղկանայ չորս առաւար հատորներէ։ Ա.—կենդանական հիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախոսութիւն ու բնախոսութիւն. Բ.—կենդանաբանութիւն. Գ.—բուսաբանութիւն. Դ.—Հանքաբանութիւն եւ երկրաբանութիւն. Մեն մի հատոր պիտի բաղկանայ 35 մեծագիր ութածալ թերթերէ, պատրաստելով 350 է աւելի գեղեցիկ պատկերներ։ Առաջին հատորի հրատարակութեան արդէն ձեռնարկուած է և առաջին տասը թերթերն լոյս տեսած են։ Այս հատորն իւր վերջը պիտի ունենայ նաև 1000 գիտական բառերէ բաղկացեալ բազմալեզուեան բառարան մի և գինը պիտի լինի 40 դրչ. իսկ կանխաւ իրը բաժանորդ վճարողայ համար 30 ու[illegible] մասնաւոր [illegible] թերթ գոյս 5 ից 10 փոքրաչափ կեդրոնատեղին է «Գիտական Շարժման» անունը, Կ. Գօլխ, Մէրճան, Գուրջ—Գամբուրլ խան։ կը գտնուի նաև Ֆրէնկեան վաճառանոցը, Պիպէռեանի գրատունը, Ալշանեանի Թղթամածառանոցը, և Պահչէ Գախուի Ջրաճաշառաց քով։—

BIBLIOGRAPHIE

LA TRIBUNE DES PEUPLES

Revue internationale du mouvement social dans les cinq parties du monde.

ADMINISTRATION :

LIBRAIRIE DES DEUX MONDES, Paris, 17, rue de Loos.

Abonnement d'un An :
France, 5 francs. Extérieur, 6 francs

SOMMAIRE :

du deuxième numéro (Mai 1886)

A nos abonnés et lecteurs.— L'Administration.
Pourquoi sommes-nous anarchistes ? ? — Elysée Reclus.
La révolution dans l'éducation. — Cassius.
Les paysans au Japon. — Metchnikoff.
La transfusion, suite et fin...
Le chauffage des villes par le feu central. — Cassius.
Mouvement social international.
EUROPE. — Observation générale. France, Belgique, Espagne, Portugal, Bulgarie, Russie, Arménie.
ASIE. — Chine, Perse.
AMERIQUE. — Etats-Unis, Haïti, République Dominicaine, Canada, Cuba, San Salvador, Venezuela, Equateur, Guatemala, Mexique, Nicaragua, Costa-Rica, Colombie.
AFRIQUE. — Maroc, Tripolitaine, Egypte.

Revue Bibliographique Internationale
Livres, Journaux, Revues

Nous ne saurions trop engager nos lecteurs à s'abonner à cette intéressante revue dont un numéro à titre d'essai est envoyé *gratis et franco* à toute personne qui en fera la demande à la LIBRAIRIE DES DEUX MONDES, Paris, 17, rue de Loos, avec le *Bulletin* donnant l'analyse des publications en vente à cette librairie.

A. H. CREET & Cie

COWNPORE N. W. P. INDES ANGLAISES

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus-nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques, dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijouteries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confianc erecommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aise de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

BANK OF BENGAL ;
ROHILCNUD ET KUMAON BANK ;
AGRA BANK LIMITED.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions rel y atives.

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articlies pour Photographes ,peintres et ingéneurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

On se charge de toutes sortes de Commissions.

Mon AD. GODCHAU

Habillements pour Hommes et Enfants

LA MAISON POSSÈDE DEUX GRANDS ÉTABLISSEMENTS DE DÉTAIL :
l'un, 12, Faubourg Montmartre, 12
l'autre, 75, Rue de Rivoli, 75

Pour la Grande Ouverture de la Saison d'Hiver, la **Mon AD. GODCHAU** *met en Vente des séries exceptionnellement avantageuses, dont ci-dessous quelques extraits :*

PARDESSUS POUR HOMMES
15fr. 20fr. 25fr. 30fr. 40fr. 50fr.

COMPLETS POUR HOMMES
35fr. 45fr. 60fr. 70fr.

HABILLEMENTS DE CÉRÉMONIE
28fr. 40fr. 50fr. 70fr. 80fr.

ROBES DE CHAMBRE
11fr. 15fr. 22fr. 30fr. 40fr.

COSTUMES POUR ENFANTS
5f50 10fr. 14fr. 22fr. 28fr.

COMPLETS JEUNES GENS
26fr. 30fr. 38fr. 42fr.

PARDESSUS POUR ENFANTS
5f50 10fr. 14fr. 22fr. 28fr.

Rayons Spéciaux
de VÊTEMENTS sur MESURE
pour Hommes & Enfants

Nous rappelons que la :

Mon AD. GODCHAU HABILLE AUSSI BIEN que les GRANDS TAILLEURS.
Mon AD. GODCHAU est connue pour vendre le meilleur marché de tout Paris.
Mon AD. GODCHAU échange ou rembourse les Vêtements ne convenant pas.
Mon AD. GODCHAU est connue et estimée comme MAISON DE CONFIANCE.
Mon AD. GODCHAU vend ses articles en détail au MÊME PRIX QU'EN GROS.
Mon AD. GODCHAU GARANTIT ses produits qui sont de PREMIER CHOIX.

Envoi FRANCO en province à partir de 25 fr.

INSECTICIDE BOUVAREL



Comme une bonne étoile

ce produit merveilleux a paru dans les nuits souvent si sombres des pauvres souffrants, et leur apportait soulagement et consolation, et quand on lit les témoignages sans nombre que les Pilules Suisses ont obtenus on le comprend. La vente d'un million et demi de boîtes par an dit tout. «Veuillez m'envoyer une boite de vos Pilules Suisses à 1 fr. 50. Je m'en trouve très bien, je ne souffre plus. Mauvais appetit, conséquence naturelle d'un estomac delabre, tout a disparu par l'usage de vos Pilules Suisses. Inutile d'ajouter que je vous autorise à publier ma lettre.
«Mme Felice FORTIN-LANGET, à Sandillon (Loiret)».
A. M. Hertzog, Phien, 28, rue de Grammont, Paris.

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանցի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.